

ՊԱԱԼՊԵՔԱՅ ԱՍՈՐԻՈՑ
ՀԻՆ ՀԵԼԻՈՒՊՈԼԻՍ ՔԱՂԱՔԻՆ
ԱԻԵՐԱԿՆԵՐԸ

Երբ հին ժամանակաց յիշատակա-
րանաց մէջ փնտռելու ըլլամք, թէ ո՞ր
են որ կը ցուցնեն զանոնք կանգնող
զանազան ժողովրդոց ունեցած քաղա-
քական վիճակը, յակամայ կամս կ'ափ-
շիմք կը մնամք առաջի մեծութեան
ձեռք, նիւթոց ընտրութեան և կերպին՝
որով կանգնեցան այն յիշատակարան-
ներն :

Եւ ահա սոյն այս զգացումն կ'ունե-
նամք, երբ անցնելով Լիբանանու լե-
րանց շղթաներն, յետ տաժանելի ձիա-
խաղաց ընթացից հասնիմք 'ի վերջին
ծայրս դաշտավայրին ուր կ'ամբառնան
Պաալպէքայ՝ Ասորւոց հին Հելիուպո-
լիս քաղաքին աւերակները : Յայնժամ
կը գտնեմք մեր առջին այնպիսի մեծա-
շուք աւերակաց կոյտ մը, որ աչքերնիս
կը շլանայ, և անկարանալով ամբողջա-
պէս ամիսփել յինքն այն գերազանց
տեսարանը, պշուցեալ կը մնայ անոր
առջին և կը քննէ հետաքրքրութեամբ
գուշակելու այն գերագոյն միտքն՝ որ
կանգնեց այդ հոյակապ շէնքերը :


Կործանած սիւնադլուխներն, իրա-
րու վրայ խառնիխուռն դիզուած որմոց
նկարէն ժապաւէններն և ձեղուններն,
քանդեալ խարխիսներն որ կը ցուցը-
նեն իրենց վրայ բարձրացած սեանց
տեղերը, հազարաւոր անձեւ կամ
հսկայաձեւ մնացորդներն, խորտակեալ
սեանց խառնակութիւնն, շինուածոց
բեկորներն՝ կը խօսին ամեն կողմ այս
յիշատակարանաց կանգմանը գործա-
կից եղող անձանց զօրութեան և փա-
ռաց վրայ, և կը ծնանին զարմացեալ
ճանապարհորդին մտացը մէջ ամիշու-
թեան և հիացման անսահման զգացում
մը, զգացումն՝ զոր կը ներշնչէ այն ան-
ակընկալ միանգամայն և հոյակապ տե-
սարանը :

Այս յիշատակարանաց վրայ եթէ

տեղեկութիւն ուղեմք յԱրաբացւոց,
որ ամեն նշանաւոր գործոց մէջ պատ-
րաստ են միշտ գերբնական միջամտու-
թիւն տեսնելու, անխռով կը պատա-
սխանեն թէ այս ամեն բաներն Սողո-
մոնի գործք են, որուն հեղինակու-
թիւնը ոչ միայն իր տիրած ազգաց
վրայ կը տարածուէր, այլ և անտեսա-
նելի հոգւոց և իր իշխանութեան ներ-
քոյ անկեալ հանճարից վրայ :

Թէպէտ և այսպիսի աւանդութիւնք
իբրեւ աներկբայ ճշմարտութիւն ընդ-
ունուելու զօրութիւն չունին, բայց
յետ երկար քննադատութեան (վերլու-
ծութեամբ Ս. Գրոց Թագաւորութեանց
մատենից և Ժամանակագրութեանց)
չեմք կրնար մերժել այն մասնաւոր յա-
րաբերութիւնը՝ որ կայ այժմեան Ժո-
ղովրդական աւանդութեանց և Ս. Գրոց
մէջ : Յաւիտենականին տան շինութե-
նէն ետքը, որոյ վերայ 130,000 գոր-
ծաւորք վաստակեցան, Սողոմոն զանա-
զան քաղաքներ կառոյց, որոց մէջ Բա-
լաթ և Թերմովթ¹ յանապատին : Եւ
անտարակոյս կատարեցաւ այս՝ իր Թա-
գաւորութեան ամենածաղկած ժամա-
նակը, երբ կը տարածուէր իշխանու-
թիւնն 'ի սահմանաց Եգիպտոսի և յա-
փանց կարմիր ծովու մինչև ցափունս
Եփրատ գետոյ. և այս ատեն կրնար Սո-
ղոմոն արդիւնաւորել այն մեծամեծ
ձեռնարկութիւնները՝ նպատակ ունե-
նալով միայն իրեն դիւրացնել վերին
Ասիոյ վաճառականական յարաբերու-
թիւնները : Թերմովթ ինչպէս և Բալաթ
ուրիշ բան չէին՝ բայց եթէ կարաւանաց
համար անցից և պահեստի միջավայր
մը. և յայտնի է որ իրենց անապատին
մէջ ունեցած գեղեցիկ դիրքովը մեծ
կարեւորութիւն ունէին, յորմէ զուրկ
էին իրենց նախանձորդ քաղաքներն :
Եւ յիրաւի վաճառականական շարժու-
մը Թերմովթ քաղաքին ճամբէն և ուղ-
ղութենէն չէր կրնար շեղիլ և հեռա-
նալ, ապա թէ ոչ կը ստիպուէր ան-
օգուտ շրջան մ'ընելու շեղելով Տիւրոս

¹ Թագ. 3. Գլ. 17. 18 :



ՊԵՂՄՈՒՆԻ ՉԷԼԻՈՅ ԼԵՐԻՆ

և Սիդոն քաղաքաց ուղղութենէն, որոնք այն ատեն ծովային վաճառականութեան մեծամեծ կեդրոնական քաղաքներ էին :

Տիւրացւոց և Սիդոնացւոց Բահաղումատուցած պաշտօնը միացեալ էր իր ամուսնոյն Աստարտեայ պաշտաման հետ : Գիտեմք 'ի Ս . Գրոց որ Սողոմոն իր ծերութեան ատեն բաց 'ի փարաւոնի դստերէն սիրեց և ուրիշ օտարազգի կիներ , որոց մէջ կային և Սիդոնուհիք ու մանք , որք հրապուրեցին զինքը օտար աստուածներ պաշտելու , որոց մէջ յանուանէ զԱստարտէն , որ և Երուսաղեմայ մէջ փառաւոր և հրապարակական պաշտօն ընդունեցաւ : Ուրեմն եթէ Սողոմոն կրցաւ շինել զթերմովթ կամ զՊալմիրա յանապատի , կրնար շատ աւելի դիւրութեամբ կանգնել Բալաթ քաղաքը և շինել հոն մեծակառոյց տաճար մը : Ամենայն ոք գիտէ եթէ որպիսի մեծ հարստութեան աղբիւր ունի այն քաղաքը , որ սեփականած է իրեն անցից վաճառականութիւնը . և եթէ մտածեմք այն դժուարին միջոցաց վրայ զորս կը գործածէին 'ի տեղափոխութիւն վաճառուց , այն ատեն դիւրաւ կը հասկընամք թէ որպիսի անյագ տենչմամբ կը սպասէին նոյն իսկանցողական հանգրստութեան և նիւթական հաճոյից և դիւրութեան՝ անոնք , որոնք ընդ մէջ այն ամեն տեսակ վտանգաց , այսպիսի անորոշ և վտանգաւոր ճանապարհորդութեան ձեռք կը զարնէին : Մեծ հանդիսի առիթ կը համարուէր այն վայրկեանը՝ յորում կարաւանը կը հասնէր , որոյ վրայ կ'աւելնային և գրգիռք խորհրդական հաճոյից , բնական հետևութիւնք պաշտաման Աստարտեայ . որով ճիշտ գաղափար կ'ունենամք զօրաւոր զմայլմանց և գրգռութեանց , որք կը հրապուրէին զօտարականս կանգ առնուլ Բահաղու և իւր ամուսնոյն պաշտաման տեղը :

Անցողաբար նշանակելով այս խնդիրը , չեմք ուզեր հին ժամանակաց կրօնից վրայ խօսիլ , վասն զի ժամանակին հեռաւորութիւնը միշտ կը դժուարաւ

ցընէ զմեզ մեկնութիւն տալ դժուարին խնդրոց : Զանոնք լաւ մեկնելու համար կը պակասին մեզ այսօր ամենակարևոր պայմաններն . ապա թէ ոչ պէտք է մեր կարծեաց հակառակ բաղում և զանազան տեսութիւններ բաժնել : Ուստի չեմք ուզեր խօսիլ Բահաղու և Աստարտեայ պաշտամանց վրայ , և ոչ Հելիու՝ զոր կը պաշտէին Յոյնք , և ոչ Արամազդայ՝ որ Անտոնինեանց ժամանակ յաջորդեց երկու առաջին աստուածութեանց : Ասորոց Բէլը , Փիւնիկեցւոց Բահաղը , Յունաց Հելիոսը և Հռովմայեցւոց Արամազդը , այլ և այլ անուամբ ամենքն ալ մի և նոյն սկիզբն և մի և նոյն անհատ կը ներկայացընէին : Որովհետև հին ժամանակաց աստուածութիւնքը շուտով կը մաշէին և կը ծերանային , անոր համար կարևոր էր փոխել և երիտասարդացունել զանոնք նորանոր անուամբ : Ուստի եթէ աւելի մօտանց քննեմք ներկայապէս զմեզ զբաղեցնող յիշատակարանները , գուցէ կրնամք ճշդել զանազան ժամանակներն որոց կը վերաբերի իւրաքանչիւրը : Շրջապատ պարսպին շինութեան համար գործածուած նիւթոց մէջ մտադրութեան արժանի են հարաւային կողման պարսպին խարխիւր ձևացնող քարերն : Պարսպը ամենաճիշտ կանոնաւորութեամբ երեք կարգ իրարու վրայ դրուած մեծահատոր քարանց միութենէն կը ձևանայ , որոց իւրաքանչիւրին բարձրութիւնն է չորս մեդր , իսկ լայնութիւնը վեցէն ինչուան տասուերկու մեդր : Այս խարխիւն վրայ կը հանգչի ուրիշ երեք կարգ քարանց շարք մը , որ կը գրաւեն 58 մեդր երկայնութեան միջոց մը , և իւրաքանչիւրն 19 մեդր տարածութեան ունին չորս մեդր կանոնաւոր բարձրութեան վրայ : Այս հսկայաձև տեսարանը կը ձգի պարսպին մինչև հիւսիսային—արեւմտեան անկիւնը , որ անմիջապէս կեցած է : Հիւսիսային երեսին վրայ 8էն մինչև 10 մեդր բարձրութեամբ և 60 մեդրէն աւելի երկայնութեամբ ուրիշ պարսպ մը կը սկըսի . և զանիկայ ձևացնող քարերն

ամենաքիչ են, վեց կտոր քար միայն։ Այս կանոնաւոր հեռաւորութեամբ դրուած քարերն իրենց մակերևութին վրայ այլևայլ խողովներ ունին, որոնք անտարակոյս ծառայած են մեծամեծ երկաթի ճանկեր հաստատելու հոն, որոնցմով կարենային զանոնք շարժել։ Ասոնք, ինչպէս նաև բոլոր փիւնիկեան ծագումն ունեցող շէնքերուն քարերն որ կ'երևին 'ի Տիւրոս և 'ի Սիդոն, նաև յերուսաղէմ հին պարըսպին վերայ, որ Սողոմոնի տաճարին չորս կողմը իբրև չրջապատ կը ծառայէր, այս քարերն այն առանձին մասնաւորութիւնն ունին, որ եղբրքնին ամենամեծ խնամքով գոգցես 10 հարիւրամեդր տեղ յղկուած են, մինչդեռ մէջտեղերը մաշած և թեթև կերպով արտաքս ցցուած են։ Այս նմանութիւնն, թէպէտ և ոչ ապահով, այլ հաւանականնշան մ'է արաբական աւանդութեան մեծ կշիռ ունենալուն, որ կը համարի թէ այս յիշատակարանքն Սողոմոնի փառաց թագաւորութեան վերջին ժամանակաց կը վերաբերին։ Բայց ինչպիսի սկիզբ ալ ունենան այս մեծայաղթ յիշատակարանքն, այս ինչ ստոյգ է որ անոնց վրայ ժամանակի ընդհատութիւն կ'երևայ, որ կը ցուցնէ թէ անկատար մնացին, և որոնք որ սկըսան անոնք չի լմընցուցին։ Բայց երբ ժամանակ անցնելէն ետքը նորանոր աշխարհակալք նոյն կողմերը Արեգական մեծ մեհեանը շինեցին, չուզեցին նոյն մեծազանգուած քարերը գործածել, որոց հանքը հազիւ մէկ հազարամեդր տեղ հեռի էր անկէ, որոնցմէ երեք հատ այնչափ դարերէ 'ի վեր գետնի վրայ կեցած են, քիչ հեռի այն ժայռէն ուսկից կը տրուած են։ Ուրեմն ասկէց յայտնի կ'երևայ թէ իրենք այս քարերը գործածելու բաւական միջոց չունէին։

Անցան վրան ուրիշ դարեր. Ասորոց տիրապետութեան յաջորդեց պարսկականն, և ասիկա ևս անկաւ Մեծին Ալեքսանդրի յաղթութիւններովն. որուն աշխարհակալութիւնքն այս արդիւնքս ունեցան որ ընկճեալ ազգերն իրարու հետ միացուց. և մէջերնին այն-

պիսի յարաբերութիւն մը հաստատեցին՝ որ երբեք պիտի չընդհատէր։ Իրեն մահուամբ փոքր Ասիա իր տեղակալաց միոյն ժառանգութիւն ինկաւ, և սա հիմնեց Ասորեստանի մէջ Սելուկեանց՝ յունական ցեղին թագաւորութիւնը։

Յունական ցեղին արուեստից վրայ ունեցած բնական ճաշակն և իր վաճառականական գործունէութիւնն՝ պիտի կանոնաւորէին և տարածէին Ասիոյ զանազան ժողովրդոց մէջ եղած յարաբերութիւնը։ Նախկին արշաւանքներէն կործանեալ քաղաքաց մեծագոյն մասը կանգնեցան դարձեալ մեծագործ շինութեամբք. և թուով ու ճոխութեամբ հոյակապ յիշատակարաններով զարդարեցան, և զարմանալի արագութեամբ յարեան և զարգացան նորանոր քաղաքներ, ինչպէս Սելևկիա, Անտիոքիա, Եպիփանիա և Լաւոդիկէ։ Յայնժամ այն ամեն քաղաքներն որ իբրև շտեմարան վաճառականութեան կը համարուէին և կարաւանաց անցից վրայ կը գտնուէին, մեծ հարստութիւն և պայծառութիւն ստացան անծանօթ ամենևին առաջին դարուց։ Փիւնիկեան Բալթ անունը թարգմանեցաւ Հելիոպոլիս, և երթալով աւելցաւ այս քաղաքիս յարդը, իր աշխարհագրական դրիւքը, վասն զի Անտիոքիոյ և Սելևկիոյ ճամբուն վրայ կ'իյնար. Սելևկեանց իշխանութեան այս ծաղկեալ դարուն պէտք է ընծայել Արեգական մեծ մեհեանին շինութիւնը, որուն պաշտօնը տարբեր անուամբ նոյն էր Բահաղու պաշտաման հետ։ Այս մեհեանին ճակատն ըստ սովորութեան արևելեան կողմը դարձած է և մեծաշուք երևոյթ մ'ունի։ Երկու որմոց մէջ, որ չորս խողովակաձև սիւներով զարդարուած է, ընդարձակ սրահ մը կը բացուի տասուերկու կորնթեան սեանց վրայ յեցած, և բոլոր սրահին լայնութեամբը շինուած սանդղով մը վեր կ'ելլըցուի։ Սրահին երկու կողմերէն երկու ցած դռներ կը բացուէին, և կը հաղորդուէին ստորերկրեայ կամարաց հետ, որ իբր հիմն կը ծառայէին մե-

հենին : Կը տեսնուին դարձեալ այս սրահին երկու կողմակի որմոց վրայ գողաւոր խորշեր , և մէջ տեղը մեծ դուռ մը , և անոր երկու կողմերը հաւասարաչափ հեռաւորութեամբ երկու ուրիշ պզտի դռներ : Այս երեք դռներէն գրեթէ 42 մեդր երկայնութեամբ վեցանկիւնի դաւթի մը մէջ կը մտցուէր , և այս գաւթի շրջապատեալ էր ուղղանկիւնի սրահներէ , որոնք սահմանեալ էին լինել իբրեւ տեղի ժողովոյ փիլիսոփայից , ուր կը վիճէին իրարու հետ և կը մեկնէին Բահադու պաշտաման խորհուրդները : Քահանայից խուցերը կը գրաւէին դաւթին վեց անկիւնները , վասն զի անտարակուսելի է որ մեծ դպրոց մը կը հաղորդուէր նորեկ ուսանողաց համար սահմանեալ մեծ շէնքին հետ : Այս գաւթիս վերջին ծայրից վրայ առաջին մուտքին նման ուրիշ մուտք մը՝ կը տանէր 107 մեդր երկայնութեամբ ուրիշ քառակուսի ընդարձակ գաւթի մը , որուն չորս կողմը կը բարձրանային ուրիշ նման շէնքեր : Այս երկու գաւթներս ալ մի և նոյն ոճ ճարտարապետութեան ունէին . մի և նոյն միակտուր կորընթեան կռանիտէ սիւներ , մի և նոյն շինուածոց պսակներ և ընդհատ ընդհատ ծաղիկներով զարդարած գլուխներ և դէմքեր :

Այս ընդհանուր ստորագրութիւնն չի կրնար ճիշտ գաղափար տալ այն ազդու տեսարանին՝ որ կը հիացնէ այս աւերակներս հետաքննող ճանապարհորդը : Միջին դարու պատերազմաց ժամանակ քանդեալ և աւերեալ յիշատակարանաց քարերով այլ և այլ մարտկոցներ բարձրացուցին , երկու քառակուսի աշտարակք , ատամնաձև յօրինուածք և բաղըստրաց աւերմունքն մեհենին ճակատին երկու վերջին ծայրերը խափանեցին . սրահին տեղը քարէ պատուար մը բարձրացուցին , գաւթներն վեր վար եղան յերկրաշարժէ , և կամարներն պատառուելով և ճեղքուելով բացին խաւարային անդունդներ . նոյն իսկ սրահին սիւներն կործանեցան , և այս ընդհանուր աւերմանց դէմ

սրահներն միայն կրցան դիմանալ : Եւ հիմա անդամատեալ արձանաց ճեղքուածոց մէջ բուսած են կռուինչ տունկեր և ուրիշ բոյսեր . և գետնի վրայ քարակուտից լերանց մէջ ցրուած կեցած են կռանիտէ և պորփիւրէ սեանց կտորներ : Մեծ գաւթին արեւմտեան ճակատը բոլորովին կործանած է . ուստի մէկ հայեցուածով կը տեսնուի ընդարձակ դարատափը , զոր 'ի վեր ունին տակաւին կորընթեան վեց մեծամեծ և սքանչելի սիւներ : Կը բարձրանան ասոնք աւերակաց մէջ , և իրենց հսկայաձև տեսլեամբը կը փոքրկացուցանեն ուրիշ ամեն յիշատակարանները : Ասոնք են միայն Արեգական մեծ մեհենին սրահին մնացորդներն , եթէ 'ի բաց առնումբ բազում սեանց խարխիւներ , որ տակաւին մնացած են իրենց առաջին դրից մէջ : Այս մեհեանը 56 սիւներով զարդարուած էր , որոնցմէ 20 հատը երկու ծայրերն էին և 36ը երկու երկայնադիր կողից վրայ : Այս վեց կղզիացեալ սիւներս մեծութեան գաղափար մը կու տան , և իրենց մեծազանգուած ձևովը կը պահեն մեծաչափակցութեամբ այն վայելուչ և աշխոյժ յատկութիւնն , որ Ալեքսանդրի յաջորդաց դարուն նշանակն է . այն դարուն որ թողուց մասնաւոր կերպով փոքր Ասիոյ մէջ՝ արուեստից գերազանց սիրոյն այնքան օրինակներ :

Արեգական մեծ մեհենին ձախակողմը կը տեսնուի Պաալպէքայ ամենէն աւելի անարատ մնացած յիշատակարանը , Արամազդայ Հելիուպօլսեցւոյ մեհեանը : Քառասուն և չորս կորընթեան սիւներ , 14 երկու կողմ երկայնութեան վրայ , և 8 երկու կողմ լայնութեան վրայ՝ 'ի վեր ունին զսրահն որ կը շրջապատէ զանիկա : Արեւելեան ճակատը կրկին կարգ սիւներով զարդարուած է , որովք կը ձեանայ մեհենին գաւթը : Գոգցես 'ի մէջ ամբողջական կործանման ուրիշ ամեն յիշատակարանաց , այս միայն (որ ամենէն նորն է ժամանակաւ , վասն զի Անտոնիոսի Պիոսի թագաւորութեան ատեններն կ'իյնայ) ,

կեցած է տակաւին յոտին, 'ի բաց առեալ դէպ 'ի հարաւակողմն նայող սեանց կարգը, որոնք այնպիսի կերպով կործանած են, որ իրենց խոյակներովն լեցուցած են բոլոր շրջակայ փոսերը: Երբ հիւսիսակողման սրահին տակ հասնիմք, կը հիանամք տեսնելով անհամար զարդերով զարդարուած ձեղուն ճոխութիւնը, որոց մէջ կ'երևին Հերայի, Անահայ, Հերմեայ և Լետայ արձաններն: Արևելակողման վերջին ծայրը կ'իյնայ մեհենին մուտքը, ուսկից ներս կը մտցուի ուղղանկիւն մեծ դուռով մը որ շրջապատեալ է մտացածին և ինքնահնար կերպարանքներով: Ասորեստանի մէջ յաճախ պատահած գետնաշարժի դժուր մամբ մը այս դրան կենդրոնական լեզուակը ելաւ իր տեղէն, և իր առաջին դիրքէն մեզր մը տեղ հեռանալով՝ կախուած կեցած է մուտքին վրայ, սպառնալով իյնալու անոնց վրայ՝ որոնք կու գան ընդհատելու այս անապատացեալ մեհենին խորհրդական լռութիւնը: Դուռը երկու կողմանէ ամրացած է երկու միահատոր քարանց վրայ, ըստ ութանկիւնի կամարասիւն գմբեթից Եգիպտացոց: Մեհենին ներքսակողմը խափանեալ է ձեղունէն ընկած կամ պատէն բաժնուած քարերով: Եւսակայն որչափ հիանալի և գեղեցիկ է այս մեհենա իր կորնթեան սիւներով բաժնուած խորշից վայելուչ ձևովն:

Մէջը եղած մեծագին մետաղէ չաստուածոց արձաններն անհետացան երբ հեթանոսական աստուածութեանց յաջորդեց քրիստոնէութիւնը: Խորտակեալ քանդակաց աւերածոց մէջ կը տեսնուին մեհենին ներքին թևը 'ի վեր բռնելու համար սահմանեալ խարխիւներն, երբ մեհենն եկեղեցւոյ փոխուեցաւ: Ահա այսպիսի է այս աւերակաց ներկայացուցած տեսարանը. մեծահատոր վիմաց ընտրութիւնն, զարդուց հարստութիւնն, և ամեն բանէ աւելի ընդ մէջ երկուց լերանց անապատացեալ դաշտի մէջ կանգնեալ մեհենաց դիրքն, սքանչելի տեսարան մը կ'ընծայեն:

Արեգական պաշտաման նուիրուած

այս սեղաններս, այս լուսաւոր երկինքս, այս հրատառ մթնոլորտս, հոս ամեն բան կրօնական երկիւղ կը շնչէ:

Ի՞նչ եղաւ այն քաղաքաց որ ծաղկեալ և բարգաւաճ կ'ապրէին այն մեհենաց ստուերին տակ: Հարուստն Հելիուպօլիս՝ որուն նախկին փառացն և բախտին կը վկայեն այնքան յիշատակարանք, այսօր ուրիշ բան չէ՝ բայց եթէ ողորմելի գեղ մը, արեգական մէջ չորցած շաղախէ շինուած տուներով, վեց կամ եօթն հարիւր անձանց խեղճ ապաստանարան մը:

Եթէ այս աւերակաց ձայնը կը կոչէ մեր մտածութիւնը 'ի վերայ անցեալ դարուց, շրջակայ երկիրներն բնակող զանազան ժողովրդոց խմբից վրայ մտադիր քննութիւն մը՝ կը վկայէ մեզ որ բոլորովին անհետացած չեն նոյն կողմերէն հին կրօնքն, և թէ կը գտնուին ցարդ անոնց մնացորդներն: Անսարկք երկրպագութիւն մատուցանելով կրակի՝ կը շարունակեն Բահադ — Հելիոսի աւանդութիւններն, որ կենաց սկիզբ կը համարուէր. մինչդեռ իրենց մօտաբընակ իսմայելացիքն կը յարգեն միայն Աստարտեայ պաշտօնը. և Տիւրքիք՝ որ թէպէտ սովոր են միշտ հետեւել իրենց գտնուած երկրին պաշտամանցը, սակայն կը պահեն իրենց տաճարաց մէջ պղնձէ կամ հողէ անհեղեղ արձաններ, որ ցուրտ կը ներկայացնեն, նշանակք երբեմն Բահադու — Մողղբայ:

Ճանապարհորդն որ կ'ուղեւորի 'ի փոքրն Ասիա, կը տեսնայ բլրոց վրայ, որոց վրայէն կ'անցնի, դարական ծառոց անտառներ: Ասոնք մնացորդք են այն նուիրական անտառաց, որոց ստուերին տակ կը կատարուէին Ասորւոց դիցուհւոյն խորհուրդներն: Այժմեան քրիստոնեայ ժողովուրդք, ջերմեռանդք հին աւանդութեանց, ուխտադնացութեան կ'երթան նոյն տեղեաց, և անհեղեղ սեղանի մը վրայ՝ հին մեհենի մը մնացորդներէն շինուած, կը կատարեն նոյն կողմերը պատուեալ այս ինչ սրբուհւոյ մը պաշտօնը:



ՖՈՐՄԱՅՑԱ ՀՈՎՏԻՆ ԴՈՁԱ ՋՐՎԷԺԸ

(Չռիցցեի Իտալական)

